«ԲԼԵՋԱՆ»
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ,ՍՈՑԻԱԼԱԿԱՆ,
ԲԻԶՆԵՍԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԿ

“BLEJAN”
ECOLOGICAL, SOCIAL, BUSINESS
SUPPORT NGO

Հասցե. ՀՀ, ք. Գավառ, Դաշտոյան 1-ին նրբանցք, տուն 16
Հեռ. (0264) 2-11-57, բջջ. (077) 76 46 41
Web: www.blejan.org

Address.RA, Gegharkunik marz, Gavar, Dashtoyan st.1/16
Tel.: +374 264 2 11 57, mob: +374 77 76 46 41
E-mail: info@blejan.org blejanli@gmail.com

ԲԼ–Գ–012 11.09.2020

Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության
ինստիտուտի ղեկավար
Էվելինա Ղուկասյանին
Պատճեն՝ ՀՀ շրջակա միջավայրի
նախարար Ռոմանոս Պետրոսյանին

Հարգելի տիկին Ղուկասյան

Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից տարածված պաշտոնական լրահոսի, առաջիկայում կգործարկվի Սևանա լճում սիգի փորձարարական արդյունագործական ձկնորսության լրամշակված կարգը: Նախագծում իրականացված լրացումների համաձայն. Այսուհետ Սևանա լճում արդյունագործական ձկնորսությունը կթույլատրվի իրականացնել նաև Փոքր Սևանի հատվածում: Նախկինում հաստատված 17 տեղամասերին կավելացվեն ևս 8-ը: Սևանա լճի ողջ ավազանում կգործի «Սևան» ազգային պարկի կողմից հսկվող ընդհանուր 25 տեղամաս:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն, այն է.

- ✓ Սևանա լճում և Սևանա լիճ թափվող գետերում մինչև 01.09.2020թ.-ը հաստատված պաշարների՝ ձկնատեսակների, դրանց քանակների մասին(ըստ տեսակի, տարիքի, քանակի, տեղանքի):

Նաև խնդրում եմ տրամադրել ինստիտուտի կողմից իրականացրած վերջին մոնիթորինգի արդյունքները, եզրակացությունը՝ կապված ցանցավանդակային տնտեսությունների շահագործման արդյունքում ջրի որակի հետ(տրամադրել ինդիկատորային ցուցանիշների մոնիթորինգը, ջրի և հատակային նստվածքների համալիր մոնիթորինգը, լճի ամբողջ մակերույթային շերտի արբանյակային մոնիթորինգ):

Թղթային տարբերակները ստանալու համար պատրաստ ենք վճարել, եթե էջերի թիվը գերազանցում է օրենքով պահանջվածը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալ եմ:

Հարգանքով՝

ՀԿ նախագահ Լիաննա Ասոյան

ՀՀ ԳԱԱ ԿՀԷԳԿ ՀԻԴՐՈԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ՁԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

INSTITUTE OF HYDROECOLOGY AND ICHTHYOLOGY (IHEI) OF SCIENTIFIC CENTRE OF ZOOLOGY AND HYDROECOLOGY NAS RA.

ИНСТИТУТ ГИДРОЭКОЛОГИИ И ИХТИОЛОГИИ (ИГЭИ) НЦЗГЭ НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0014 Ք.Երևան, Պարույր Սևակի 7 ,
Հեռ. (37410) 207590; հեռ/ֆաքս . (37410) 207591
e-mail: e_ghukasyan@yahoo.com

7, Parujr Sevak st.., 0014 Yerevan,
Republic of Armenia
tel: (37410)207590,
Tel/fax: (37410) 207591
e-mail: e_ghukasyan@yahoo.com

1/09 16.09.2020

«ԲԼԵՋԱՆ» բնապահպանական,սոցիալական,
բիզնեսի աջակցության ՀԿ-ի Նախագահ՝
Լիաննա Ասոյանին

Հարգելի Լիաննա Ասոյան,

Ի պատասխան Ձեր 11.09.2020թ. ԲԼ-Գ-012 գրության, հայտնում ենք, որ ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոկոգիայի գիտական կենտրոնի Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտը Սևանա լճի ձկնային պաշարների հետազոտություն իրականացնում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության հետ կնքված պայմանագրի շրջանակներում, համաձայն տեխնիկական առաջադրանքի, հետևաբար հետազոտության արդյունքները հանդիսանում են նախարարության սեփականությունը և Դուք դրանք կարող եք ստանալ համապատասխան կառույցից դեկտեմբեր ամսին, երբ կամփափվեն հետազոտությունների արդյունքները:

Հայտնում ենք նաև, որ Ձեր ներկայացրած հարցադրումների զգալի մասին պատասխան չի կարող տրվել, քանի որ պետական պատվերի և հաստատված համապատասխան գիտական թեմաների բացակայության պայմաններում ցանցավանդակային տնտեսության ազդեցության գնահատում ինստիտուտի կողմից չի կատարվում:

Արբանյակային լուսանկարներ ինստիտուտը նույնպես չի կարող տրամադրել, քանի որ դա վճարովի ծառայություն է և Ձեր ՀԿ-ն ինքը կարող է ձեռք բերել համապատասխան կառույցներից վճարովի հիմունքներով:

Ինստիտուտի կողմից 2020թ. իրականացվել են Սևանի լճախորշերի հետազոտություն, որի հաշվետվությունը կից ներկայացնում եմ:

Ինստիտուտի տնօրեն, կ.գ.թ. Է.Ղուկասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

№ 5/07.2/10475
«18» «09» 2020թ.

«Բլեջան» բնապահպանական, սոցիալական,
բիզնեսի աջակցության ՀԿ-ի
նախագահ Լ.Ասոյանին

Հարգելի տիկին Ասոյան

Ի պատասխան Ձեր 2020թ. սեպտեմբերի 11-ի ԲԼ-Գ-012 գրության հայտնում եմ, որ «Պետության կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման» 2019 թվականի դեկտեմբերի 9-ի /ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-20/02/ ծածկագրով շրջակա միջավայրի նախարարության և ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված պայմանագրի համաձայն նախատեսվում է իրականացնել Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման աշխատանքներ: Աշխատանքները կատարվում են պայմանագրի հավելված N 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համապատասխան և սահմանված ժամկետում: Սևանա լճում և Սևանա լճի ջրհավաք ավազանի գետերում ձկան կենսաբանական տվյալների և պաշարների գնահատման վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը նախատեսվում է ներկայացնել պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո:

Ինչ վերաբերում է Ձեր գրությամբ պահանջվող՝ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում ձկների կենսաբանական տվյալների, քանակների և պաշարների գնահատման վերաբերյալ հաշվառման մասին տեղեկության տրամադրմանը, ապա վերոնշյալ տեխնիկական բնութագրով նման տեղեկություն հավաքագրված չէ:

9/18/2020

X
ԳՐԻԳՈՐ ԳՈՒԼՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: GULYAN GRIGOR 3202780018 Գ.Գուլյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
0010, ք.Երևան, Հանրապետությանհր., Կառավարականտուն 3
10010608@e-citizen.am |minenv@env.am | www.env.am
հեռ. +374 11 818520 | ֆաքս՝ +37411 818506

ՀՀԿԲ
Ա.Սուքիասյան
011-818-559